Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ
1911
N: 13,20
4. տետր

Հեր
578

1999 ·9

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

ՀԱՅ ԵՐԵՒԵԼԻՆԵՐՈՒ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ, ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԸ, ՁԵՌԱԳԻՐՆԵՐԸ, ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒԼՆ. ԵՒԼՆ.

1512–1912

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ 400ԱՄԵԱՅ ՅՈԲԵԼԵԱՆԻ ԱՌԻԹՈՎ

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՑՔԵՂ. ՏՊԱԳՐՈՒԹԵԱՄԲ

ԿԱԶՄԵՑ
Վ. Գ. ՋԱՐԴԱՐԵԱՆ

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՐ

ՊՐԱԿ ԺԳ.

56. Գրիգոր Շղթայակիր 1 Պատկերով
57. Եղիազար Պարք. եւ Երդիկս. 2 »
58. Արիստակէս Ալբուռն-Տիւրքի 1 »
59. Առաքէլ Ալբուռն-Տիւրքի 1 »
60. Ստեփան Փափազեան 3 »
61. Մուրատ վարժապետ Բիթիացի

ԿԱՐԱՊԵՏ ՊԷՅ ՏԻՒԶԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ՄԱՏԵՆԱՇԱՐ ԹԻՒ 20

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
ՆՇԱՆ-ՊԱՊԻԿԵԱՆ
~~1910~~ 1911

ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
Վ. ԵՒ Պ. ՋԱՐԴԱՐԵԱՆ ԵՂԲԱՐՔ
Կ. ՊՈԼԻՍ

92
Հ-36

ԼԵՈ
578

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՐ

ԳՐԻԳՈՐ ՇՂԹԱՅԱԿԻՐ ՊԱՏՐԻԱՐՔ

Ս. ԵՐՈՒՍԱՂԷՄԱՅ

† 1749



168. Գրիգոր Շղթայակիր Պատրիարք

Ամբոխու համալսարանին յառաջդէմ աշակերտներէն Կոյտ Յովհաննէսի հետ կը թողու վանքը նաև Գրիգոր Շիրվանցի Շղթայակիր, որ ծնած էր Բաղէշի մէջ և իր կրթութիւնը ստացած նոյն համալսարանը Վարդան Վարդապետի աշակերտելով և երկուքը մէկ ուխտի կերթան Թաթլոյ և Վարոսի, Հռոմոսի և Ս. Յովհաննու վանքը։

Գրիգոր Վարդապետ 1709ին առաջնորդ կը կարգուի Մշոյ Ս. Կարապետ վանքին որ երկրաշարժին կը փլչի (1709 յունիս 3) և որ չնորհիւ իր առաջնորդին նորէն կը վերաշինուի, Շիրվանցի, մինչև 1713 Մշոյ Ս. Կարապետի առաջնորդութիւնը կը վարէ։

Երբ 1715ին Կոյտ Պօղոս պատրիարք կընտրուի, յաջորդ օրը սեպտ. 10 Գրիգոր Վարդապետ Պօղոս բոլոր եկեղեցիներուն մէջ կը յիշատակուի «պատրիարք Ս. Երուսաղէմի» Կոյտի կարգադրութեամբ, նոյն օրը տեղի կ'ունենայ նաև երկու ամբոխներուն բաժանումը որ կը հաստատուի կառավարութեան կողմէ։

Թէ ինչու միացուած էին այս երկու ամբոխներուն պատրիարքութիւնները՝ իրաւ որ չատ որոշ չէ, ինչ որ յայտնի է սա է թէ Պօղոսի պատրիարքները անգին գումարներու պէտք ունէին ծախսերու համար, որովհետև պատրիարքութիւնը կաչառքով կը գնուէր այն ատեն և այսպիսի ծախքերու համար Ս. Յակոբայ գանձարանէն հարուստ տեղ մը ո՞ւր պիտի գտնէին։ Հաւանէի դիտողութիւնը թէ ագէտ և խելագար հովիւներու փառամոլութիւնն ու չարաշահութիւնը պատճառ եղած են այս պիսի միաւորութեան մը չատ ճիշտ է։ Թէև յայտնի ալ է որ Աւետիք պատրիարք երկու ամբոխները միացուց Երուսաղէմի Մինասի պատրիարքի զեղծումներուն համար։

Անոնց զատ պատրիարքի կողմէ Երուսաղէմ գացող փոխանորդներն ալ պատճառ եղան որ խնդիրը չարաշահութեան կերպարանք առնու։ Պօղոսի պատրիարքական ամբոխը այնչափ աղտոտ-

6570-Ա.Հ.Հ.
Հ-Ֆ 580
5.78-ԼՈ
ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

ուած էր որ մէկ տարուան մէջ երկու երեք պատրիարք կը փոխուէր՝ ատոր միջոցներով։

Պատրիարքարանի կողմէ միշտ աշխարհական փոխանորդներ կը ղրկուէին Երուսաղէմ վէքիլ, դապգիմալ, պապա անուններով որոնց մասին Հաննէ զանոնք կը նմանցնէր կատաղի շուներու և լափլիզող գայլերու։

Այսչափ կեղեքումներու, զեղծումներու հետեւանքով Երուսաղէմի ամբողջ պարտքի տակ ինկած էր, պարտատէրներ աննկարագրելի վայրագութիւններ կընէին Ս. Յակոբի վանքին մէջ, ժամերգութիւնք դրեթէ դադրած, ուսում գիտութիւն չատտաց խոյս տուած էին և միաբաններ իրենց խուցերուն դռները ամուր գոցած էին, նոյն իսկ ժամարարի ձեռքէն սկիհ յափշտակուած էր՝ պարտքի համար։

1717 օգոստոս 18ին Գրիգոր Վ. Պոլիս կը մտնէ և յաջորդ տարին հանգանակութեան կը սկսի Կոլոտ պատրիարքին հետ՝ Երուսաղէմի պարտքը վճարելու համար։ Գրիգոր Վ. շղթայ կը կախէ իր վզէն և բոլոր եկեղեցիները պտտելով դրամ կը հաւաքէ, ժողովուրդը իր ունեցած չունեցածը սիրով կուտայ այդ պինի մը անձնուէր պատրիարքի որուն կէտ նպատակին եղած էր Երուսաղէմի վանքը պարտքէ ազատել։

Գրիգոր պատրիարք երկար ատեն Պոլիս կը մնայ և իրեն փոխանորդ կը կարգէ Հաննա վարդապետ, և ինք վզին ծանր շղթան անցուցած, կ'ուխտէ չհանել մինչև որ Աթոռին պարտքը չը ժողվէ, իսկ ինք Աստուածածնի եկեղեցւոյ դուռը կը կենար տօնական օրերուն և լալով կ'աղաչէր ժողովուրդին շղթաները երերցնելով և կը կոչէր լալագին ի դիմաց Ս. Աթոռին.

— Ողորմեցարուք, ողորմեցարուք ինձ, հաւատացեալքդ Քրիստոսի, զի տունն իմ ի գրաւի է և որդիք իմ հեռացեալ են յինէն և ես մատնեալ ի գերութիւն, նստեալ եմ ի սուգ դառնութեան, ողորմեցարուք ինձ, հանէք և լուծէք զծանրութիւն պարտուցս որք դիզեալ են ի վերայ իմ, ես աթոռ էի Առաքելոյն Յակոբայ, այժմ Աթոռ եմ պարտուց և ոչ ոք է որ ձեռն կարկառէ ինձ։

Այսպէսով Շղթայակիր շատ դրամ հաւաքեց և իր շղթաները մնացին 8 տարի և ատոր համար Թուրքերն ալ զինք կը կոչէին Զինճիրլի վարդապետ։ Այս միջոցներուն էր որ մեծ հրդեհ մը ծագեցաւ և այրեցան Պոլսոյ Ս. Աստուածածնի եկեղեցին և Պատրիարքարանը։ Երկու պատրիարքներն յուսահատած էին, քանի որ մէկ կողմէ Երուսաղէմի բեռը կար և հիմայ ալ այս այրեցուէր եկեղեցին և Պատրիարքարանը պէտք էր շինել, իրենք արքայական հրամանը առացան և ձեռնտուութեամբ Ակնցի Սեղբոս Ամիրային, Կեսարացի Միքայէլի և Յարութիւնի ու Սարգիս Գալֆայի շինեցին, երկու անձնուէր պատրիարքներն ալ գործաւորներուն հետ աշխատեցան հող և կիր կրելով և յուսկ ուրեմն վերաշինուեցան Պատրիարքարանն ու Ս. Աստուածածին եկեղեցին։

Ս. Յարութիւն տաճարին նորոգութիւնը սկիզբ կառնէ 1720ին երբ ոչ իսկ տասը դրուշ ունէր վանքը, Գրիգոր Պատրիարք հրաման կը ղրկէ Հաննա Վարդապետին շինութիւններու ձեռնարկելու համար, իրեն նեցուկ էին Յովհաննէս Կոլոտ Պատրիարք, Յակոբ Նալեան Վ. (ապա պատրիարք) և Սարգիս Վ. Սարաֆեան։

1721ին Գրիգոր պատրիարք ճամբայ կելլէ դէպի Երուսաղէմ ցամաքէն Հալէպ կը հանդիպի «բաղում միւլքեր» կը գնէ հոն՝ վանքին համար, կը նորոգէ հողատունը և 1721 փետր. 12ին Երուսաղէմ կը մտնէ ուր միջազգային և խանդավառ ընդունելութիւն կը գտնէ։

Շղթայակիր իր բազմազգի յաջողութիւններով մինչև հիմայ երախտագիտութիւն կարթնցնէ սրտերու մէջ՝ հռչակաւոր Պարոն Տէր Գրիգոր պատրիարքի և Այնթապցի Եղիազար կաթողիկոս-պատրիարքի մեծագործութիւններէն ետքը։

Շղթայակիր՝ 15 տարիներ Երուսաղէմէն դուրս չելաւ, ան՝ քաջալերուած իր անդադար յաջողութիւններէն կաւելցնէր իր աշխատութիւնները, Երուսաղէմի մէջ հայոց սրբավայրերը շինելէ և վերականգնելէ ետք ուզեց որ անոնց իրաւունքներն ալ վերահաստատել տայ Արքունի նոր հրովարտակներով։ Այս խնդիրը շատ կարեւոր էր Յունաց ոտնձգութիւններուն առաջքը առնելու համար։

1726ին Գրիգոր Պատրիարք իր շղթան կը հանէ վզէն, Կարապետ կաթողիկոսի հրամանաւ։

1736 յուլիս 23ին Պոլիս կուգայ բողոքելու համար Յունաց դէմ, որոնք կուզէին Ս. Յակոբայ տաճարը խլացնել։ Շղթայակիր իր իսկ ձեռքով գրած է այս ճամբորդութեան և իր Պոլսոյ մէջ անցուցած կեանքին մանրամասն յիշատակարանը, որ ամէն կերպով հետաքրքրական և պատմական մեծ արժէք ունի և որ Սիոնի 1866 տարւոյ մէջ հրատարակուած է։(1)

Շղթայակիր կը հասնի Ենկի Դափու (Եէնի-Գափու) յուլիս 23ին. իր Պոլիս գալուն «սատյգ

(1) Տես այս մասին Յարութիւն ամիրա Մուրատեանի կենսագրութիւնը։

պատճառն այս է, զի Աստուծով զկնի զանխիւ պարտս Սրբոյ Աթոռոյն հատուցանելոյ և զբազում տեղիս շինելոյ և նորոգելոյ զսուրբն տեղիսն և զդուռն մեծ, խորհեցաք զնէտիէի ճէրիմէն և զամենայն սենետ Ս. Աթոռոյն նորոգել տալոյ, որ եղին իսկ Աստուծով։ Ի թուին ՌՃՁԸ (1739) դեկտեմբեր 23 մեր Ս. Աթոռոյ նէտիէի ճէրիմէն նորոգեցան և մեծազօր Արքային իւր ձեռագրովն կնքեաց միջնորդութեամբ Յուսուֆզի բարեպաշտ էլչիպէկին»։

Այս ուղեւորութիւնը շատ օգտակար եղաւ, ոչ միայն հայոց իրաւունքները վերահաստատուեցան Երուսաղէմի մէջ, այլ նաև Շղթայակիր նոր ձեռնարկութիւններ ըրաւ Պոլսոյ մէջ։

1738 օգոստոս 22 Իւսկիւտարի մէջ Երուսաղէմի վանք բաւած հաստատութիւնն ընդարձակեց և մատուռով մ'ալ օժտեց։ Վանքի այգին յարակից բաժինները ունեց և. Զերբեղեան Ս. Յակոբայ անունով մատուռ մը շինեց հոն, գիշերով դաղտնի կատարեց օծումը և առաջին պատարագը ինք մատոյց։

Նոյն տարին մայր եկեղեցւոյ մօտիկը Երուսաղէմի վաքըֆներէն հին տան մը կէսը քակել տուաւ և շինեց «մեծ օտայ մի կրկին սրահիւք ներքոյ և վերոյ, վերակացութեամբ մեր մահտէսի Յակոբին» որ շատ աշխատեցաւ և յանկացուց Երուսաղէմայ միաբաններու իբր իջեւան։

Երուսաղէմատուն անունը, ինչպէս յայտնի կերեւայ, Շղթայակիրին շինել տուած օթեւանին տրուած չէ, այլ ետքը, հաւանաբար արդի շէնքին շինութեան ատեն։

Պոլիս կը մնայ 4 ուկէս տարի չափ և կը մեկնի 1740 օգոստոսի վերջերը և սեպտ. 15ին կը հասնի Երուսաղէմ, «բազում ամբոխիւք և երկու մուսէլլիմօք»։

Շղթայակիրի շինութիւնները բազմաթիւ են, մեծ շինութիւններով և բարեկարգութիւններով պայծառացուցած է Ս. Տեղերը, Կոլոտ պատրիարք թանկագին զգեստներ կը նուիրէ Ս. Յակոբայ գանձարանին։

Գրիգոր պատրիարք խոր ծերութեան մէջ զգալով իր տկարութիւնը, գրեց իր կտակը և ղրկեց Պոլիս, վերահաստատեց Յակոբ Վ. Նալեանը իր փոխանորդի պաշտօնին մէջ, նորոգեց Ս. Հրեշտակապետ եկեղեցին, թէև բաւական ալ նեղութիւններ քաշեց Դամասկոսի կուսակալէն։

Վախճանեցաւ 1749 փետրվար 13ին և թաղուեցաւ պատրիարքաց շարքին մէջ և որուն վրայ տապանաքար մը դրած է Սեղբոս Ամիրայ՝ իր բարեկամը։

Կոլոտ և Շղթայակիր երկու պաշտելի անուններ են որոնց յիշատակը փայլուն կը մնայ մեր եկեղեցական—ազգային պատմութեան մէջ։

ԱՂԲԻՒՐՆԵՐ. — Յովհաննէս Կոլոտ Բաբգէն Վ. Վիեննա 1904. — Պատմ. Զամչեան Դ. հատոր. — Պատմ. Ս. Երուսաղէմի. — Սիոն 1866. — Սարգիս Եպս. Սարրաֆեան. — Գալէմքեարեան (1909). — Ընդարձակ օրացոյց Հ. Ասատուր 1901. — Պատմ. Ս. Երուսաղէմայ Հաննա. — Պատմ. Պալասանեան. — Պատմ. Հայկական տպագրութեան Լէօ եւլն.:

ԵՂԻԱԶԱՐ ԱՅՆԹԱՊՑԻ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ

† 1691

Եղիազար ծնած է Այնթապի մէջ. մանկութենէն թողլով իր ծննդավայրը և իր ծնողքը, վարդապետներու փոքրաւոր եղաւ, հետաքրքիր և ուսմանց հետամուտ՝ սկսաւ դաս առնել անոնցմէ, աշակերտեցաւ Տնքչեցի Յովհաննէս վարդապետին, որ Կաղկանեցի Պետրոս կաթողիկոսին աշակերտն էր և Երուսաղէմայ Աստուածատուր պատրիարքին ուսուցիչը։

1641 թուականին Պոլիս կուգայ և վարդապետ կը ձեռնադրուի իր ուսուցիչ վարդապետէն՝ Յովհաննէսէ և հետզհետէ քարոզներ կը պտտի, մինչև որ իր համբաւը կը լսուի ամէն կողմ և մեծ անուն կը ստանայ. 1647 թուականին Արլնի բարձրահայեաց Ս. Աստուածածնի վանքին առաջնորդ կ'անուանի և Ս. Էջմիածնայ Փիլիպպոս Կաթողիկոսէն եպիսկոպոսական աստիճան կը ստանայ, վերադառնալով իր աթոռը շատ բարեկարգութիւններ կ'ընէ, նորոգութիւններ և նորանոր շէնքեր կը շինէ, միաբանական կարգը կը բարեկարգէ, ուսման և զարգացման նպաստելու համար 2 ձեռագիր Աստուածաշունչ և հարիւրէ աւելի ձեռագիր գրքերով կը ճոխացնէ թանգարանը։

1651 թուականին Եղիազար Պոլիս երթալով, մեծ համբաւ շահեցաւ իր «քաղցրաբան» քարոզութիւններով, անհատական ամբողջ ժո-

ղովուրդը, ամիրաները և ռամիկը ամէնքն ալ համակրեցան և պատրիարք ընտրեցին զինքը Պոլսոյ՝ Դաւիթ Պատրիարքի անկումէն ետք։

Իր պատրիարքութեան շրջանը թէև կարճ բայց բեղմնաւոր եղաւ, եկեղեցւոյ ապականեալ կարգերը բարեկարգեց և վճարեց Պատրիարքարանի պարտքը, որով շատ մը չարիքներու առաջքը առաւ, ամէնքը համոզելով սէր և միութիւն հաստատեց և կառավարեց ժողովուրդը ոչ թէ կառավարական բռնութեամբ, այլ

169. Եղիազար Պատրիարք եւ Կաթողիկոս

իր խակ կարողութեամբ և հանճարովը, իրեն աջակից էին Արղնոյ Ս. Սարգիս եկեղեցւոյ քահանաները որոնք կը վկայեն յայսմաւուրքի յիշատակարանին մէջ (տես Թորոս աղբար Բ. հատոր էջ 401)։

1653 Թուին հրաժարելով Պոլսոյ պատրիարքութենէն, վերադարձաւ իր աթոռը Արղնու Ս. Աստուածածին վանքը, կայսերական հրամանագրով։

Հոն կը սկսի նորոգել վանքը, դիտելի է որ Մկրտիչ արքեպս. Նաղաշէ ի վեր որ հիմնադիրն էր սոյն վանքին, նորոգութիւն չէր տեսած այդ վանքը, բնակիչները վախերնուն քար մը չէին դրած, մինչեւ Եղիազար եպս. անվախօրէն նորոգեց և նորանոր յաւելուածներ շինեց, և ինք իր պատրիարքութեան ատեն թէ՛ շինութեանց հրամանը առած էր և թէ վանքին եկեղեցական զգեստներ նուիրել տուած էր՝ ամիրաներուն։

Բռնաւորներուն հալածանքէն նորէն Պոլիս գնաց ուր այս անգամ աւելի կարեւոր պաշտօն մը յանձնուեցաւ իրեն, այն է Երուսաղէմայ Աստուածատուր Պատրիարքի օրով ոտնձգութիւններ եղած էին Յոյներու կողմէն՝ Հայոց սեփականութիւններուն, Պատրիարքը տեսնելով որ Այնթապցի Եղիազար եպս. յաջողակ է և հարուստ, դիմեց անոր աղաչելով որ իրեն ձեռնտու ըլլայ աշխատութեամբ և դրամով, խոստացաւ զինքը փոխանորդ կարգել և ետքն ալ պատրիարք, թէեւ Աստուածատուր դատական հէօճէթով հաստատեց, բայց միաբաններէն մեծ մասը չուզեցին ճանչնալ զինքը և աթոռին գոյքերը չուզեցին յանձնել իրեն մինչեւ որ Բ. Դուռը դիմէ ինքը և հաստատութեան հրովարտակը առնու։

Աստուածատուր Պատրիարք Եղիազարէն հաւանութիւն առնելով գնաց անոր հետ Կ. Պոլիս վանեցի իշխան Ռուհիջանին որ այն ատեն կարեւոր դիրքի տէր էր, անոր ձեռքով աղերսագիր մը տուաւ Եպարքոսին՝ Գօյնը էյրի Մէհմէտ փաշայի։

Արքունի դիւանի արձանագրութիւններուն մէջ փնտռեցին և գտան Սուլթան Սէլիմ Ա.ի և զաւկին Սիւլէյմանի հրովարտակները՝ որով կը հաստատէր հայոց իրաւունքները։

Սուլթան Մէհմէտ խնդրեցին հայոց իրաւունքը, որու վրայ Սուլթանը հրամայեց անխախտ պահել իր նախնեաց հրամանները և արգիլեց Յունաց Պատրիարքի ոտնձգութիւնները։

Այս հիման վրայ նորէն հրովարտակ գրուեցաւ և տրուեցաւ Եղիազարու, որ նախորդ հրովարտակին ալ պատճէնը առաւ և 1656 Թուականը կրող 2 հրովարտակները առնելով Երուսաղէմ մեկնեցաւ ուր դատաւորին ներկայացնելով խնդրեց գործադրութիւնը։

Եղիազար վարդապետ մեծ յաջողակութեամբ պաշտպանեց Հայոց իրաւունքները և շատ մը աշխատութիւններով կրցաւ ձեռքէ ելած իրաւասութիւնները վերստին առնել։

Եղիազար գտաւ Գրիգոր Պարոն Տէր Պատրիարքի պահած դրամները և սկսաւ վանքը պայծառացնել շէնքեր շինելով։

Յունաց Պատրիարքը տեսնելով Եղիազարու յաջողութիւնները, բարկացած Երուսաղէմէն մեկնեցաւ և գնաց Պոլիս դատավարելու համար, Հայոց փոխանորդները ապիկար մարդիկ չը կրցան պաշտպանել իրենց իրաւունքները որու վրայ Հայոց անհպատ վճիռ տրուեցաւ և դարձեալ սեփականութիւնները անցան Յունաց ձեռք։

Վէճը այնչափ սաստկացաւ որ, կարգ մը ամբաստանութիւններ ըրին Եղիազարու վրայ և բանտարկեցին զինքը։

Եղիազար կաշառք տալով ազատեցաւ, խոստանալով նորէն կաշառք տալ երբ Հայոց իրաւունքները պաշտպանուին։

Դամասկոսի բդեշխ Թիյար օղլու թէեւ յոյս տուաւ, բայց միւս կողմէն ալ հրամայեց իրեն բերել Ս. Յակոբայ բանալիները և կնքել տուաւ Ս. Յակոբայ դուռը. Եպարքոսին ալ իմացուց պարտ ու պատճառ։ Դաւիթ Վ. Բիրիացի Ռուհիջան գործակալին դիմեց և խնդրեց որ բարեխօսէ Հայոց իրաւունքներու մասին։

Անդրիանուպօլիս պատգամաւորութիւն մը գնաց Եպարքոսին՝ որ մերժեց ընդունիլ զիրենք։

Երուսաղէմայ մէջ Թիյար Օղլու հրամայեց բանալ Ջաւկլին Ս. Յակոբայ վանքին դուռները՝ ուրկէ վերջ նորէն գոցել տուաւ։

Եպարքոսը Յունաց պատրիարքէն իմանալով եղելութիւնները, յանդիմանական նամակ մը ուղղեց Թիյար Օղլուի և կը խորհէր ձերբակալել և մահուան դատապարտել Եղիազար Այնթապցին։

Հայերը տեղեկանալով իմաց տուին Եղիազարի որ ատանդական կը շրջագայէր Եգիպտոս, Դամասկոս. ուրկէ յաւլ ուրեմն հասաւ Պոլիս 1657 Նոյեմբերին և 3 ամիս փախստական մնալով ձերբակալուեցաւ 1658 Փետրվարի 18ին։ Եպարքոսը հրամայեց տանել հանել զինքը և գահճապետին յանձնել։

Ամէնքը լքեցին զինքը, միայն Երեմիա Չէլէպի Քէօմիւրճեանցը որ Տ. Կոմիտասի եղբայրն էր պահապանները կաշառելով, մտաւ բանտը ուր տեսաւ Եղիազար վարդապետը ոտքերը շղթայուած տերեւի մը պէս դողդոջուն, սկսաւ սրտապնդել և խնդրել որ զինքը ազատէ, յանձնեց իր քով եղած դրամը զոր Քէօմիւրճեան ալ տարաւ Ռուհիջանին որ այն ժամանակ Երուսաղէմայ գործակալն էր։

Երեսունեչորս օրեր բանտ մնալէն ետք Հայ մեծամեծներու խնդրանքով և կաշառքով դիմեցին Եպարքոսին որ անդրդուելի կը մնար, ըսելով ի պատիւ Եղիազարի որ ինք չէր ուզեր իր ազատութիւնը, «թող ես զոհուիմ կ'ըսէր բայց Ս. Յակոբայ վանքը Հայերու ձեռքէն չերթայ»։ Նամակ մը գրեց Մարտիրոս Վ.ին թէ այն որ ինծի ազատել կ'աշխատի թող խորհի Ս. Յակոբայ վանքի մասին, անիծուած թող ըլլայ։

Վերջապէս շատ աշխատութիւններով Մարտ 22ին ազատեցին Եղիազար Եպ.ը և ուրախութեամբ Ղալաթիոյ եկեղեցին բերին։

Եղիազար ամիրաներով և տարիներով աշխատելով վերջապէս կրցաւ 1659ին ազատել Ս. Յակոբայ վանքը՝ Յոյներու ձեռքէն. գերբնա-



170. Կոնդակ Եղիազար Պատրիարք-Կաթողիկոսի

կան ճիգերով և մեծամեծ զոհողութիւններով, ետքը ինքն ալ Աստուածատուր Պատրիարքի փոխանորդ կարգուեցաւ և մեկնեցաւ Երուսաղէմ ուր վռնտելով Յոյները գրաւեց Ս. Յակոբայ վանքը։

Բայց հոս է որ կ'սկսի Եղիազարի կեանքին մութ կէտը. իր յաջողութիւններէն յափրացած կը խորհի հաստատել կաթողիկոսական նոր աթոռ մը Երուսաղէմայ մէջ, (1664) շինել կա-

տայ նոր եկեղեցի մը Ս. Էջմիածին անունով, զարարատել կուտայ Կաթողիկոսական աթոռ մը ստանալ, փառաւոր և գեղարուեստական որ ցարդ կը մնայ Երուսաղէմայ մէջ և որ չինուած է Մելիտն անուն ճարտարապետէ մը։

Շատ մը նորանոր շէնքեր կը շինէ և նորոգութիւններ կ'ընէ, և որպէս զի թշնամութիւններ չը ծագին մզկիթին ալ նորոգել կ'ուտայ։

Այս մէջտեղուն Սուլ Խաչատուր Կաթողիկոսն ալ Երուսաղէմ եկաւ, Եղիազար չափազանց պատիւներ շուայլելով խոստում առաւ յարմար առիթէ մը զինքը Կաթողիկոս օծել։

Եղիազար Եպարքոսին դիմեց շատ մը նուէրներով և համեցուց Կաթողիկոսութեան հրովարտակը առնել, ինչպէս նաեւ Երուսաղէմայ Պատրիարքութեան հրովարտակը։ Եպարքոսին բանակին մէջ կը գտնուէր նաեւ Հայ Զէյէպի մը Ասպրօ Զէյէպն, զայն եւս իր կողմը առաւ Եղիազար և ըրաւ իսկն սրտակից մտերիմը։

Այնթապցին Բիրիա անցաւ և նամակ մը գրեց Սուլ Խաչատուր Կաթողիկոսին հետեւեալ կերպով։

«Հոգեւոր եղբայրդ մեր Խաչատուր Կաթողիկոս Սուլ, նամակս ձեռքդ հասնելուն պէս, շուտով մը — եթէ կարելի է — առանձին սուրհանդակով Բիրիա հասնիս. ոպասաւորներդ և կարասիներդ քեզմէ ետք թող գան, մի ուշանար կ'ապաչեմ, որովհետեւ ժամ է մեր մտադրութիւնը կատարելու, որ Երուսաղէմայ մէջ միասին որոշեցինք»։

Բայց Խաչատուր Կաթողիկոս չուզեց անխորհուրդ գործ տեսնել և կանչեց հայ մեծամեծները որոնց մէջ էր և Երէմիա Զէյէպին և խորհուրդ ընելով, ապշեցան և վախցան թէ ազգին մէջ արդէն եղած պառակտումներուն վրան հատ մ'ալ պիտի աւելնայ. մանաւանդ թէ գիտէին թէ ամբողջ Հայ Ազգը կապուած է Էջմիածնի և իր Ցակոբ Կաթողիկոսին որ կը մտածէր տառապած հայ ազգին համար օգտակար միջոցներ։

Երէմիա Զէյէպի ազգին կողմէ կը մեկնի Բիւրիա համոզելու համար զինքը որ ետ կենայ իր մտադրութենէն, հակառակ իր ջանքերուն Եղիազար Վ. անդրդուելի մնաց, իրեն պատասխանն էր — Ինչո՞ւ կը յոգնիք ես արդէն ունիմ հրովարտակ Եպարքոսէն և մտադիր եմ ընել շատ մը կարեւոր նորոգութիւններ, շատ օգուտ պիտի ցուցնեմ ազգին և առանց նուէր ժողվելու, ժողովուրդին Միւռոն պիտի ղրկեմ ամէն կողմ։

Երեմիա Զէյէպի անցյոյս ըլլալը իմացուց գրով ի Պոլիս։ Բիչ ատեն ետք Խաչատուր Կաթողիկոսն Պոլսէն Բիրիա երթալով հան նոքէն Եղիազարի հետ խորհեցան և տեսնելով արքունի հրովարտակը, ձեռնադրեց զինքը Կաթողիկոս։(1) Այն ատեն Եղիազար օրհնութեան թուղթեր գրեց Օսմանեան Տէրութեան ամէն կողմը և յայտնելով իր իշխանութիւնը որ ստացաւ թագաւորական հրամանաւ, յորդորեց ամէնքն ալ սիրով ըլլալ իրարու հետ և խոստացաւ անոնց շատ բարիք ընել և ձրի Միւռոն ղրկել նուիրակներու հետ, և ինք եկաւ դնաց Երուսաղէմ։ Եղիազար Բիրիաէն Եպարքոսին գրեց որ արգիլեն Էջմիածնի նուիրակները, քանի որ ինքն է Կաթողիկոս և անոնք Էջմիածնի նուիրակները կը խառնակեն օսմանեան սահմանները, ատոր վրայ Եպարքոսէն հրովարտակ եկաւ որ ամէն կողմ արգիլեն Էջմիածնի նուիրակները (1666)։

Եղիազարու գիրերը հասնելով ամէն կողմ երկպառակութիւնը սկսաւ, կէսը Ցակոբ Կաթողիկոսը կ'ուզէր, որոնց կոչուեցան Ցակոբեանք, իսկ կէսը Եղիազարը՝ որոնք կոչուեցան Եղիազարեանք։

Ցակոբ Ծերունի Կաթողիկոսը խրատներ և թուղթեր կը ղրկէր ամէն տեղ, խնդրելով որ պառակտումի պատճառ չդառնան և Եղիազարը Կաթողիկոս չճանչնան։

Մարտիրոս Վ. Կաֆայեցի անոր հակառակորդ դարձաւ, Եղիազարը չէին թողուր որ մնայ Երուսաղէմ, իսկ ան անվնաս ծպտուած կը փախչէր իջեւանէ իջեւան, պանտեղու համար և դրամով գնելու կարգ մը իրաւունքներ։

Սարսռուած Ցակոբ Կաթողիկոս 1665ին Պոլիս գնաց, խռովութիւնները վերցնելու համար, կարելի չեղաւ և յուսահատ վերադարձաւ։

Իրերը այս վիճակին մէջ տեւեցին 14 տարիներ, որ ատեն Պոլսոյ պատրիարքութիւնն ալ Անդրէաս Կրպօ և Էքմէքճի Սարգիս անունով պատրիարքներ ունեցաւ, խառն և անկերպարան վիճակ մը ունեցած էր պատ. Աթոռը, կաշառք և մատնութիւն սովորական դարձած էին։

1680ին Ցակոբ Կաթողիկոս նոքէն Պոլիս գնաց, Եղիազարի խնդրին համար, ուր վախճանեցաւ։ Էջմիածնի Միաբանութիւնը համաձայնութեան եկաւ և գտաւ դժուարութենէն դուրս ելլելու միջոցը, փոխանակ նոր կաթողիկոս ընտրելու հրաւիրեց Եղիազարը շարունակել իր կաթողիկոսութիւնը Էջմիածնի մէջ։ Այս մասին դիմեցին Երեւանայ պարսկի իշխանին և դժուարութեամբ համեցուցին որ ընդունեց Եղիազարու կաթողիկոսութիւնը։

Ատոր վրայ հրաւիրակ ղրկուեցան Երուսաղէմ Պետրոս վարդապետ և ուրիշներ որոնք Երուսաղէմէն Պոլիս վերադարձան 1682 մարտի սկիզբը, ուրկէ արքունի հրովարտակն ալ ստանալով Էջմիածին դարձան 1682 օգոստոս 14ին։

Եղիազար իմաստութեամբ վարեց կաթողիկոսութիւնը և ամէնուն հետ համերաշխ վարուեցաւ և Էջմիածնայ մէջ շատ մը շէնքեր շինեց, Զորաղեղի անապատի եկեղեցին, և զանազան ատեաններ եւն։ 1691 օգոստոս 8ին վախճանեցաւ։ Հակառակ իր մէկ թերութեան (Երուսաղէմայ կաթողիկոսութիւնը) Եղիազար Այնթապցի իրաւամբ մեծ և դիւանագէտ եկեղեցական մը եղած է և կարողացած է այն չփոթ ժամանակներուն մէջ ազատել Երուսաղէմայ հայոց վանքին իրաւունքները, դիւանագիտութեամբ և կաչառքով, կրցած է կախաղանէն ազատիլ և իր նրբամտութեամբ յաջողապէս վարել Պոլսոյ, Երուսաղէմայ և Էջմիածնայ երբեակ աթոռներն ալ։ Իր դիւանագիտական ատաղանդին ապացոյցն է իր մէկ կոնդակը (տես թիւ 170) որուն մէջ կը խօսի այն ատենուան Իսմայիլ Փաշային մասին, այդ կոնդակը գտանք Օրթագիւղի Անատոնեան Միաբանութեան մատենադարանին մէջ ուր ազնուութիւնը ունեցաւ մեզ թոյլատրել լուսանկարելու վանքին առաջնորդը Գեր. Հ. Ռաֆայել Թ. Ծ. Վ. Միասէրեան։

Այս մասին մեզ թանկագին աջակից ունեցանք վանքին դիւանապետը և մատենադարանապետը Հ. Սահակ Վ. Սրապեան։

ԱՂԲԻՒՐՆԵՐ. — Պատմ. Ս. Երուսաղիմայ Ա. հատոր — Պատմ. Զամչեան Ե. — Զամբռ. Սիմէօն Կարոյիկոսի Էջմիածին. — «Հանդէս Ամսօրեայ» 1910 յունիս Տ. Թորգոմեան. — Սուրբ Գիրք հին օրերու Մուրեան. — Հայկական տպագրութիւն Լ. օ Ա. հատոր. — Պատմ. Երուսաղէմի Հանինա. — Իր կոնդակը. — Կենսագրութիւն Լեհեցի արանց Բ. հատոր Վ. Ենեցիի (1839) — Թորոս Ադբար Բ. հատոր էջ 400-407. — Բնաբանութիւն հին ընտանեաց Էջմիածնի. — Սուրագրութիւն Էջմիածնի 1812 Ա. հատոր։

(1) Ըստ ստորագրութեան Էջմիածնի 1666 թուականին Պոլսոյ մէջ օծուած է կաթողիկոս եւ ինք ձեռնադրած է 7 եպիսկոպոս (?)։

ԱՐԻՍՏԱԿԷՍ ԱԼԹՈՒՆ-ՏԻՒՐՐԻ

(1804—1868)

Ակնէն գաղթած է Առաքել Ալթունեան անուն անձը, որուն գաւառն էր Արիստակէս Ալթուն Տիւրրի, ծնած է Պոլիս 1804 Մարտ ամսոյ մէջ։ Իր հայրը Առաքել Պոլսէն փոխադրուած է Զմիւռնիա ուր կը մեռնի որբ թողլով 4 տարեկան հասակին մէջ՝ իր զաւակը Արիստակէսը որ իր նախնական կրթութիւնը կստանայ տեղւոյն վարժարանին մէջ, ուրկէ ետք Ռու անուն ֆրանսացիի մը վարժարանը կը յաճախէ և հոն կ'ընտելանայ ֆրանսերէնի։ Վարժարանին դասընթացքը աւարտելէն վերջ Եզիպտոս կ'երթայ ուր Եաւուֆ Պէյ վարժարան մը բացած էր, հոն ուսմունքը կը կատարելագործէ ուսնելով նաեւ իտալերէն և արաբերէն լեզուները։ Դպրոցը աւարտելէն ետք դեռ երիտասարդ հասակին՝ տէրութեան պաշտօնեայ և քանի մը տարի ետք Մէհմէտ Ալիի քարտուղար կ'անուանուի։

Միջոց մը Էրմասբ արաբերէն թերթին խմբագրապետը եղած է և ապա երբ Պոլսոյ Պէյ Եաւուֆ արտաքին գործոց նախարար եղած է, ինք ալ քիչ ատեն ետքը խորհրդական կ'անուանուի։

Դիւանագիտական խնդրոյ մը առթիւ Louis-Philippe Ֆրանսայի թագաւորին գրուելիք պաշտօնագիր մը այնչափ յաջողութեամբ գրած է որ Մէհմէտ Ալի փաշա Խեդիվը՝ Արիստակէս Ալթունեանի ճակատը համբուրելով ըսած է։

— Օղլում Ալթուն, ինչին իսմին Ալթուն ապրիլ, Տիւրրի տիր։ (Տիւրրի մարգրիտ ըսել է արաբերէն։) Ատկից ետք Ալթունեան մականունը փոխուած է Ալթուն-Տիւրրի։

Մէհմէտ Ալի փաշայի մահէն ետք իր զաւակը Իպրահիմ փաշա և յետոյ Ապպաս փաշաները կը յաջորդեն, ինք պաշտօնէն կը քաշուի և տկար ըլլալով Զմիւռնիա կը հաստատուի ուր քիչ մը ատեն վաճառականութեամբ զբաղելէ վերջ Պոլիս կը հաստատուի 1851ին ուր Ճէզայիրլեան Մկրտիչ ամիրայի հետ Շամի մաքսերու վարձակալութիւնը կը ստանձնեն։

Ազգային գործերու մէջ մեծ մասնակցու-

թիւն ունեցած է և 1857ի Գերագոյն Ժողովոյ անդամակցած է և մեծ դեր ունեցած է Ազգ. Սահմանադրութեան հաստատման մէջ ուր Ա. զամիսն, Օտեան և Ռուսխանեան և ուրիշներու հետ խմբագրած են Սահմանադրութեան օրէնքը (տես թիւ 31)։ Քաղաքական և Ուսումնական Ժողովներու անդամ, երկար տարիներ Թաղական Խորհրդական եղած է Խասգիւղի Ս. Սահականոց եկեղեցւոյն։

Ազգային երեսփոխան եղած է 1860էն գրեթէ մինչեւ իր մահը ու մշտ ազգին չանհրաժեշտ պաշտպան հանդիսացած է։

Դրագէտ անձ, Ֆրանսերէնէ թարգմանած է Գիլնովտիէ անուն վի դատանուՍիւնը որ ձեռագիր կը մնայ իր զաւկին Յակոբ Ալթուն-Տիւրրիի քով։

Մեռած է 1868 Յունվար 2ին։

Իր կինը Կիւլ հանում († 1875) ժամանակին զարգացած Հայ կիներէն մէն էր և քաջ Ֆրանսագէտ։

ԱՂԲԻՒՐՆԵՐ. — Մասիս 1868 Յունվար. — Բառարան հայ կենսագրութեանց — Յակոբ Ալթուն-Տիւրրիի եւայլն։



171. Արիստակէս Ալթուն-Տիւրրի

ԱՌԱՔԵԼ ԱԼԹՈՒՆ-ՏԻՒՐՐԻ

1840—1886

Ծնած է Ալեքսանդրիա 1840 թուին, իր կնքահայրը եղած է Եւսեբիեան Պօղոս պէյ, իր հայրը մեծ դիրք ունէր Եգիպտոսի մէջ ուր Արաբաքին գործոց խորհրդական էր, իր նախնական կրթութիւնը ստացած էր Եգիպտոսի մէջ ուր ուսած է Արաբերէն, Տաճկերէն, Հայերէն, Ֆրանսերէն և Իտալերէն, յետոյ երբ հայրը Պօլիս կուգայ, կը մնայի Խասգիւղ ուր կը յաճախէ Ներսէսեան վարժարանը, և կ'ըլլայ ժամանակին ուսումնականներէն մէն։

Ինք տակաւին 20 տարեկան երիտասարդ կը հիմնէ Թատրոն մը Խասգիւղի մէջ։ Այն ատեն հրաման չըլլալով Թատրոնի արտօնութիւնը առնել կը խոստանան Կէլիէլեան Փիլիպոս և Մկրտիչ ամիրաները որոնք սակայն սխալմամբ փոխանակ Թատրոնի դաղինօի արտօնագիր մը կ'առնեն, առաջին հայ Թատրոնը կը բացուի, չէնան կը շինուի և առաջին ներկայացումը կ'ըլլայ Երուանդ Առաջին Թատերա՛սայ՝ Էքշեանի և Բ. Մաղաքեանի առաջնորդութեամբ. անոգին բազմութիւն ղեցած էր Թատրոնին մէջ, ժամանակին բոլոր ծանօթ անձնաւորութիւնները ներկայ եղած են և մեծ ընդունելութիւն գտած է այդ առաջին Թատրոնը, որուն երաժշտութիւնը եղած է Տիգրան Չուխաճեան (1858-9)։ Սակայն նոյն չարթուն Թատրոնի չէնան կը փլցնեն և մէջը ինչ որ կայ կը քանդեն քանի որ արտօնագիրը դաղինօի համար էր։ Հետեւաբար կ'ուզենք մեր բարեկամներուն սխալը որոնք կը կարծէին թէ ամիրայները ընդդիմացած են, թերեւս ալ...



172. Առաքել Ալթուն-Տիւրրի

Վերջը այդ չէնքը տուն կը շինուի որ մինչեւ հիմայ կանգուն է։

Եւրոպա կը ճամբորդէ, և գրեթէ ամէն գլխաւոր քաղաքները կը պտտի, ինք Քաղաքական Ժողովոյ անդամ, Ազգ. Երեսփոխան, Միացեալ ընկ. հիմնադիրներէն մէն եղած է միացնելով կարգ մը ընկերութիւններ, Կիլիկեան, Այրարատեան եւայլն։

Մեռած է 1886 յունիս 7ին։

Իր եղբայրը Յակոբ Ալթուն Տիւրրի տակաւին կ'ապրի և մէն եղած է Ասիական ընկ. հիմնադիրներէն և քանիցս Թաղական Խորհուրդի անդամ Խասգիւղի մէջ։

ԱՂԲԻՒՐՆԵՐ. — «Արեւելք» 1886 յունիս. — Երկրագունց 1886 յունիս։

ՍՏԵՓԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

1839—1888

Ստեփան Փափազեան Թրքահայ վերջին դարու պատմութեան մէջ կարեւոր էջ մը գրաւող անձնաւորութիւն մըն է. ծնած է Խասգիւղի մէջ 1839 նոյեմբերին։

1841ին Ներսիսեան վարժարանին և 1850ին ալ Ազգ. Հիւանդանոցի Որբանոցը դրուեցաւ և քիչ ատեն ալ հետեւեցաւ Երկրագործական վարժարանի դասերուն, 1854ին Զմիւռնիա կանչուեցաւ իր մօրեղբօր անուանի Անդրէաս վարժապետ Փափազեանի քով, ուր իր ուսումը աւարտեց և օդնական դասատու կարգուեցաւ վարժարանին մէջ։

1858ին Պոլիս վերադարձին Ս. Փրկչի Որբանոցի Հայերէնի ուսուցչութեան կոչուեցաւ և պահեց այդ պաշտօնը մինչեւ վերջ։ Իր Հայ լեզուի հմտութեան պատճառով Պերճ անուան արժանացաւ։

Ուսուցչական ասպարէզէն ծառայեց մինչեւ իր մահը զանազան վարժարաններու մէջ ստանձնելով պատասխանատուութիւններ, սակայն նշանակելի է իր գործունէութիւնը իբր տնօրէն Ղալաթիոյ Լուսաւորչեան վարժարանին (1864 մարտ 20) ուրտեղ հասուցած է բազմաթիւ աշակերտներ, որոնք շատ կարեւոր դեր կատարած են ազգային շրջանակի մէջ: Ինքն է նաեւ գլխաւոր հեղինակը և ջանադիրը Ազգ. Կեդրոնական վարժարանին հաստատութեան, որուն գաղափարը առաջին անգամ ինք յղացած է՝ 1863 էն սկսեալ՝ գաւառներէն Պոլիս դիմող ուսանողներու երկրորդական կրթութիւն տալու դիւրութիւն մը ընծայելու համար:



173. Ստեփան Փափազեան

Ինք որբ և պանդուխտ, այս վերջիններուն մէջ ապրելով՝ կրցաւ ճանչնալ կեանքին տխուր կողմերը. իր տեսչութեան օրով Ղալաթիոյ վարժարանը այն ժամանակուան երկու երեք լաւագոյն վարժարանաց մին էր, թերեւս ամէնէն լաւը:

Երկար տարիներ ազգային երեսփոխան եղած է և միշտ ընդդիմախօսութեան պետը՝ Ընդհանուր ժողովներու մէջ. գործնականօրէն ուսումնասիրած էր ազգային խնդիրները, գոց գիտէր Ազգ. Սահմանադրութիւնը և ամէն ազգային կանոնագիրները:

1863 յունուար 2ին սկսած է հրատարակել Ժամանակ հանդէսը որ տեւած է մինչեւ 1869 (տես թիւ 175):

Բնար երաժշտական ընկերութեան՝ Բնար Հայկականի մէջ հրատարակուելիք բանաստեղծութեանց ընտրութեանը հսկող մարմնոյն անդամ անուանուած է:

1863ին Ուսումնական Խորհրդոյ անդամ, 1865ին Ղալաթիոյ Թաղական Խորհրդոյ անդամ ընտրուեցաւ, զոր երկար տարիներ վարեց: Իր պաշտօնավարութեան միջոցին էր որ Ս. Լուսաւորիչ եկեղեցին օժտուած է հասութաբեր կալուածներով:

Ստեփան Փափազեան 1863ին կրթական ծրագրի մը հեղինակը եղած է՝ առաջին անգամ՝ Ազգ. վարժարաններու մէջ միօրինակ կրթութիւն մը հաստատելու դիտումով (1865-67): 1873-74-76 վարչական շրջաններուն ալ Ուսումնական Խորհրդոյ անդամակցութիւնը վարած է: 1870ին հազիւ իր օրինական տարիքը լրացուցած, երեսփոխան ընտրուած է մինչեւ իր մահը պահելով այդ պաշտօնը հանդիսացած է ճարտար ատենաբան և իր կուսակցութեան (Ղալաթիոյ օճախին) ամէնէն նշանակելի անդամներէն մէկը. կրակոտ ընդդիմադիր մը եղած է և վարչութեան մշտնջենական հակառակորդը:

Անձնանձրոյթ աշխատութեան մարդը եղած է և իրեն յանձնուած որ և է ազգային պաշտօն չէ մերժած թէեւ անոնց գրեթէ միշտ ամէնէն դժուարինները իրեն վիճակուած ըլլային:

1872ին Քաղ. Ժողովոյ անդամ և խորհրդարանական գրեթէ բոլոր յանձնաժողովներու տեղեկաբեր, իբր Ազգային գործոց խորունկ գիտակից իր անունը ազգային Երեսփոխանական Ժողովի տարեգրութեանց մէջ անմոռանալի մնալու սահմանուած է:

Պերլին գացած է 1878ին Հայոց Դատին պաշտպանութեան համար Պերլինի Վեհաժողովին դիմաց պատգամաւորութեան հետ:

Իր վերջին տարիները (և գրեթէ միշտ) աշխատակցած է Մկրտիչ Մէլիքեանի Հայրենիքին և հրատարակած Ազգային տեսութիւններ որոնք նուազ բուռն սակայն աւելի հմտալից և խոհական էին:

1887ին Գում-Գափուի Պէզճեան Մայր վարժարանին տեսուչ անուանուեցաւ, պաշտօն զոր 10 ամիս վարեց և մեռաւ 1888 մարտ 16ին:

Անհուսալի Մկրտիչ Մէլիքեանի գրութենէն մաս մը իր մահուան առթիւ Հայրենիքի մէջ գրուած.

«Ս. Փափազեան իբրեւ ուսուցիչ հազարէն աւելի աշակերտներ ընծայեց Ազգին մեծաւ մասամբ գաւառացի. յորոց ոմանք բժշկութեան, այլք հեռագրական, մաս մը ուսուցչական, մաս մը խմբագրութեան և մաս մ'ալ փաստաբանութեան արհեստներ ընտրեցին և շատ փայլեցան իրենց ընտրած ճիւղին մէջ:

Ս. Փափազեան երեսփոխանի պաշտօն վարեց անընդհատ գրեթէ 19 տարի և ճշմարտութիւնն խոստովանած կը լինիմք եթէ ըսեմք որ երեսփոխանութեան փայլերէն մին եղաւ: Արդէն ի տղայ տիոց ընդունակ էր ատենաբանելու՝ և երբ երիտասարդ հասակի մէջ էր դեռ, անհուներ կը հրաւիրէին զինքը ազգային հանդէսներու կամ վաճառականաց առթիւ ճառեր արտասանելու: Լեզուն թէեւ ոչ այնքան յարդարեալ, սակայն հրապուրիչ էր և համակրելի, անհնար է նկարագրել իւր խանդն, զգացումներն ու երեւակայութիւնն: Եւ երբ երեսփոխանական աթոռը բազմեցաւ, արդէն գիտակ էր ազգային կենաց. ծանօթացած էր Սահմանադրական անկերջանալի կռիւներու, Լուսաւորեալ և Խաւարեալ բանակռիւներուն, և այս ամէն պայքարներուն մէջ ցուցուցած էր իւր կորովն ու գործունէութիւնն: Ուստի ի սկզբան անդ իւր երեսփոխանութեան անուանի եղաւ իւր ճարտարախօսութեամբ. ոչ ոք լաւ քան զինքն սերտած էր ազգային խնդիրները, իւր միտքը շտեմարան մ'էր ազգային բոլոր դէպքերու և պատմական իրողութեանց զորս կարող էր յիշել օրն ու թուականն: Ազգ. Ժողովոյ Ատենագրութեանց ստուար մասը կը կազմեն իւր ատենաբանութիւնք, և շատ քիչ անգամ տեսնուած է որ իւր ո և է առաջարկն մերժուած լինի: Միտքը բեղուն էր, երեւակայութիւնն վառ, սիրտն ու զգացումներ զեղուն:

Ս. Փափազեան իբրեւ վարչական մարդ, 1872ի Վարչութեան հոգին եղաւ: Այն Վարչութեան օրով իւր գրչին ու եզական փորձառութեան արդիւնքն են Սահմանադրական հրահանգը, Թաղ. Խորհրդոց հրահանգը, Կտակաց կանոնագիրը, Վարժարանաց բարեկարգութեան հրահանգը զորս 1878 ին Ազգ. Ժողովը նոյնութեամբ քուէարկեց և որք կը մնան ցարդ Ազգին մէջ իբրեւ տիրող օրէնք:

Ս. Փափազեան ամեն կարեւոր Յանձնաժողովներու և Մասնաժողովներու մէջ գտնուեցաւ և գործօն դեր կատարեց: Իւր գրչին ու աշխատութեան արդիւնքն է գաւառական հարստահարութեանց նշանաւոր տեղեկագիրը:

Այս պատուական անձը իւր անկեղծ ոգւով ու հաստատամտութեամբը և եռանդուն գործունէութեամբը սիրելի էր Սէրվիչէն, Ս. Արսլանեան, Օտեան, Ասպրօ, Ռուսինեան, Նուրեան, Մարգոսեան եայլ կարեւոր անձնաւորութեանց. սոցա ամէն խորհրդակցութեանց ներկայ կը գտնուէր միշտ և իւր իմաստուն խորհուրդներով կը լուսաւորէր զանոնք: Երկու անգամ Ուսումնական Խորհրդոյ պաշտօն վարեց և իւր պաշտօնակցաց գլխաւոր օժանդակն եղաւ: Սահմանադրութեան Գործադիր Յանձնաժողովոյ Ատենադպրի պաշտօն վարեց իւր վարպետին՝ Ստեփան փաշայի Ատենապետութեամբ. իւր սկզբանց գերին էր. սակայն գիտէր զանոնք հաշտեցնել ազգային շահուց հետ. իւր յատուկ դաւանութիւնն, իւր որոշ գիծն ու ուղղութիւնն ունէր, սակայն կը սիրէր համաձայնիլ երբ ազգային բարձրագոյն շահեր պահանջէին զայդ իրմէ:



174. Ստորագրութիւն Ստեփան Փափազեանի

Կաթողիկոսական վերջին ճակատամարտին մէջ ամենէն արի ախոյեանը հանդիսացաւ, և չը վախցաւ երբէք ներքին կամ արտաքին ո և է սպառնալիքներէ. ինչ պէս չվախցաւ այն օրը յորում հրազէն կը պարպուէր իւր վրայ Ազգ. Ժողովոյ մէջ:

Ս. Փափազեան պաշտպան հանդիսացաւ միշտ Հայ եկեղեցականութեան. երկիւղած էր և բարեպաշտ և ամէն վանքերու մէջ, մանաւանդ երբ աքսորի սիրտ դառնապարտուէր իւր երկու ընկերներով՝ Բ. Ղազարոսեան և Օ. Խոճասարեան էֆէնտիներու հետ, միշտ Աստուծոյ արդարութեան ու գթութեան կ'ապաւինէր և անձնանձրոյթ կը դիմէր յեկեղեցի զօրանալու համար փորձութեանց մէջ որք կը յարուցուէին իրեն դէմ:

Աւա՜ղ, որ այսպիսի թանկագին կեանք մը շուտ խամրեցաւ, մինչդեռ աւելի մեծ բարիքներ կ'ակնկալէր իրմէ Ազգը: Ստեփան Փափազեան էֆէնտի իւր մէկ քառորդ դարէ աւելի ունեցած ազգային բազմաչարչար կենաց մէջ խոնջած ու սպառած էր, վերջին տարիներս իւր բազմադրաւ աշխատութեամբք գրեթէ մաշեցուցած էր իւր ուղեղ, որ վերջապէս պատճառ եղաւ իւր



ԺԱՄԱՆԱԿ
ՀԱՆԴԷՍ ՀԱՅՐԵՆԱՆՈՒԷՐ

30 ՄԱՐՏ Ա. ՏԱՐԻ 1863 ԹԻՒ 7

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԷՖՆԱՆ
ԱՂԳԵՑԻՆ ԵՆՂՈՒՊԵԿԱՆ ԲԵՐԻԱՅԻ
ՊԷՖՈՒԻ Լ.

ՅԻՇԱՏԱԿ ԳԵՐԴԱՍՏԱՆԱ ԿՈՐՈՒԹՅԱՆ

175. Ստեփան Փափազեանի հրատարակած ժամանակ թերթը

ստարաժամ մանուան։ Անոր համար Պարագայք չուտ խլեցին իւր կեանքը և յանմիտիթար սուգ հանեցին իւր առաքինի լծակիցը, սիրասուն զաւակները ընդ որս և լրագրոյս Տնօրէնը որ 1860էն ի վեր անոր հետ ապրեցաւ, գործակից եղաւ շատ պարագաներու մէջ և իբրեւ նորա մօտաւորագոյն աչակերտը ամէնէն աւելի ճանչցաւ անոր սիրան ու հոգին, կեանքն ու գործերը որք անմահ պիտի պահեն նորա յիշատակը։

Իր հեղինակութիւնները.— Նոր Քերականութիւն Հայ. գրաբար և աշխարհաբար լեզուաց 1860. — Դասագիրք ընթերցանութեան 1866, 1868, 1874, 1882. — Դասագիրք Ազգ. Պատմութեան (4 տպագր. վերջինը 1870). — Ի հանդիսի բացման Աէնեանփրկչեան վարժարանին խօսք Փափազեանի 1877. — Կենսագրութիւն Յ. Պէզճեանի 1864. — Կենսագրութիւն Ռ. Անդրիաս Փափազեան բազմարդիւն վարժապետի 1859. — Դասագիրք Քերականութեան 1857, 1861-63-65. — Բաղաքավարութիւն համառօտ 1874. — Դասագիրք հին և նոր կտակարանաց 1871, 1874. — Նախնական դասագիրք թուագիտութեան 1860-61-63-66։

ԱՂԲԻՒՐՆԵՐ.— Ազգ. Ջոջեր Յ. Պարոնեան 1879-80 էջ 161-176.— Երկրագունց 1888 ապրիլ.— Արեւելք, Մանգուսմ, Ճ. Շարիկ Մարս ամիս.— Կիլիկիա 1862 թ. 6. — Հանդիսի բացման Աէնեանփրկչեան վարժարանի, խօսք Ս. Փափազեանի 1877 Պոլիս տպեալ.— Ընդարձակ օրացոյց 1910ի էջ 41.— Թէոդիկ տարեցոյց 1910 (Արշակ Ալպօյաճեան) եւայլն։

ՄՈՒՐԱՏ ՎԱՐԺԱՊԵՏ ՏԻՒՐԶԵԱՆ
ԲԵՐԻԱՅԻ

(1801—1848)

Մուրատ վարժապետ կը սերի Օձնեցի Յովհաննէս իմաստասէրէն, ինչպէս որ կ'աւանդուի որդւոց որդի այս ազգատոհմին մէջ և ինչպէս որ ալ Մուրատ վարժապետ գրած է։

Մուրատ վարժապետ իր կենսագրութիւնը կը սկսի իր մեծ հօրմէն Պօղոս Տիւրզեանէ որ կը կոչուէր Պասմաճի Գարա Պօղոս։ Անկից առաջ ծանօթ արձանագրութիւն չկար այլ աւանդութիւններ։ Այս Պօղոս անուն անձը, Սկնայ գիւղերէն մէկուն մէջ ծնած, կ'երթայ և կը բնակի Բերիա իր կնոջ Մարիամ խաթունին հետ, և հոն կը սովրի կտաւներու վրայ ապել՝ Կիպրոսի օրինակին նման, որուն պատճառաւ ան ուսնած են զինքը Պասմանի և ոչ թէ Պօղանի ինչպէս որ անուանած են Մուրատ վարժապետի կենսագիրներէն ոմանք։ Հոն երեք զաւակ կ'ունենայ Աբրահամ, Մուրատ և Գրիգոր։

Մուրատ, որ գրասէր էր և հեզահոգի բնաւորութեամբ, ժամանակ կը մեռնի Բերիոյ մէջ, նոյնպէս Գրիգոր, իսկ Աբրահամ կ'ամուսնանայ Ագուլեցի Յարութիւն Պայրնի աղջկան Անանի հետ, ուրկէ կ'ունենայ երեք զաւակ, առաջինը Յարութիւն՝ Մուրատ մականուամբ ծանօթ, Գրիգոր և Եղիսաբէթ։

Մուրատ Յարութիւն կը ծնի 1801ին Բերիոյ մէջ, քիչ ժամանակ ետք իր մայրը մեռնելով, հայրը Աբրահամ վարժապետ, այրի մնալով՝ իր Բերիոյ մէջ ունեցած տունը կը նուիրէ Բերիոյ եկեղեցւոյն և իր Մուրատ զաւակին հետ կը պանդխտի, ինք մեղմ բնութեամբը իր ամէն ազգի բարեկամներուն սիրելին էր։ 1828ին, երբ Այնթապ կը գտնուէր իր զաւակին հետ, օր մը իր սիրած մէկ կերակուրը կ'ուզէ ուտել, ուտելէն ետք կ'օրհնէ իր Մուրատ զաւակը, կը կտակէ թէ աւանդուի որդւոց որդի իրեն Օձնեցի Յովհաննէս իմաստասէրի ցեղէն ըլլալնին։ (թէեւ ապացոյցներ կը պակսին) և կը մեռնի։

Իր զաւակը Մուրատ, որուն մէկ աչքը մանկութեան տարիներն ծագկի հիւանդութենէն խաթարուած էր, շատ կը փափաքէր նկարչութիւն սովրիլ՝ երբ դեռատի մանուկ մըն էր տակաւին, և տեսնելով որ Գրիգոր մը իր երազին մէջ կը տեսնէ որ Կեսարիոյ Ս. Կարապետի վանքը գացեր է և հոն նկարիչ մը Ս. Կարապետի պատկերը կը նկարէր և նկարին աջակողմի անկիւնը Աստուծոյ ձեռքը կ'երեւէր։

Այս երազը իր հօրը պատմելով, հայրը ուղղակի կ'ուխտեն երթայ Ս. Կարապետ և քիչ օրէն կ'երթան Կեսարիա և հոն իրենց ուխտը կատարելէն ետք, կը մտնեն նկարչին գործատունը, ուր պատանին Յարութիւն հիացումով կ'ըսէ թէ իր երազին մէջ տեսած նկարն է և նկարիչն ալ նոյն պատկերը կը նկարէր, այդ օրը հայրը իր զաւակը կ'ամուսնէ Մուրատ քանի որ իր փափաքին (մուրատ) հասած էր և անկէ ետք անոր անունը կը մնայ Մուրատ և ապա Մուրատ վարժապետ։ Հոն Ս. Կարապետի վանքին մէջ կ'աշակերտի ժամանակ մը այդ նկարչին քով, և կ'առաջդիմէ արուեստին մէջ և ետքը կը կատարելագործէ Մարսիլիոյ մէջ քանի մը ամիսներ աշակերտելով ճարտար նկարչի մը քով, որուն պատահած էր հետեւեալ կերպով։

Մուրատ լսելով որ իր մօրեղբայրը որ Զմիւռնիացի էր, Կիպրոսի մէջ կը բնակի և մատակարարն է տեղւոյն Ֆրանսական հիւպատոսին, մինակը կը մեկնի Կեսարիոյ վանքէն և կը փափաքի տեսնել զանիկայ. իրաւ ալ կը գտնէ զայն հիւպատոսին տան մէջ, ուր բացի մատակարարութենէ կը զբաղէր նաեւ տեղական և ֆրանսական ապրանքներու ներածումով և արտածումով։

Հիւպատոսը տեսնելով կայտառ և խելացի պատանին, անոր սիրալիր ընդունելութիւն մը կ'ընէ և կը փափաքի սովրիլ Օսմանեան ձեւով նարտ խաղալ ուստի կ'առաջարկէ Մուրատի իր պարապ ժամերուն սովրեցնել իրեն։

Մուրատ տեսնելով Կիպրոսի և Մարսիլիոյ մէջ երթեւեկող վաճառաբարձ նաւերը, փափաք մը կ'ունենայ Եւրոպայ ուղեւորիլ ու կը խնդրէ հիւպատոսէն որպէս զի զինքը Մարսիլիա դրկէ՝ Կիպրոսէն մեկնելիք նաւերէն մէկուն միջոցաւ. հիւպատոսը ընդունելով անոր խնդիրքը կը հո-

գայ ճամբու ծախքերը և կը դրկէ զինքը Մարսիլիա։

Մուրատ Մարսիլիա հասնելով, հոն կը գտնէ պանդուխտ հայազգի վաճառականներ, որոնք կրօնական մխիթարութենէ զրկուած ըլլալնուն, — որովհետև ոչ եկեղեցի ունէին և ոչ ալ հոգևորական — կը փափաքէին գէթ լսել եկեղեցւոյ արարողութիւնները, և որովհետև Մուրատ վարժ էր եկեղեցական երգերու, անուշ ձայնով կ'երգէ Առ՛, Լոյս Զուարթ, Խորհուրդ Խորին և ուրիշ շարականներ և անոնք յուզումով և զմայլմունքով մտիկ կ'ընեն զինքը։ Այսպէս գիշերները անոնց հետ կ'անցունէր և ցերեկներն ալ քաղաքը կը պտտէր։ Օր մը կը յայտնէ անոնց թէ կը փափաքի նկարչութիւն սորվիլ և կ'ուզէ նկարիչ վարպետ մը ունենալ ինչ որ անկարելի կ'ըլլայ գտնել։

Այն ատեն վաճառականները կը փափաքին ճարտար նկարչի մը նկարել տալ Ս. Կոյսին պատկերը Կեսարիոյ Ս. Կարապետ եկեղեցւոյն համար, այն պայմանաւ որ մինչև որ պատկերը աւարտի ինք օգնական ըլլայ նկարչին։ Արուեստագէտը ընդունելով այս առաջարկութիւնը Մուրատ պատեհութիւն կը գտնէ արհեստին հմտանալու։ Մարսիլիոյ մէջ կ'ուսնի նաև խաղի թուղթ տպելու արուեստը։ Ապա կը պատրաստուէր մեկնիլ Կիպրոս և իր հետ առնելով Ս. Կոյսին պատկերը իր հրաժեշտը կուտայ Մարսիլիոյ վաճառականներուն և շնորհակալութիւն յայտնելով անոնց, կ'անցնի Կիպրոս, անկից Անտիոք և Այնթապ իր հօրը, որուն կ'օժանդակէ իր ուսուցչութեան պաշտօնավարութեան մէջ, ուրկէ սորված էր քերականութիւն և ուրիշ գիտութիւններ և զոր ապա կատարելագործած էր ինքնօգնութեամբ իսկ Իտալերէնը ուսած էր Բերիոյ մէջ Իտալացիէ մը։

Հոն իր հօրը մահուանէն վերջ (որուն պարագաները պատմեցինք քիչ առաջ), վաճառականութեամբ կուգայ Պոլիս իր հետ բերելով Բերիոյ բերքերէն պիստակ և ընչախոտ։

Անկից կ'երթայ Արմաշ ուխտի և Աստուածազար տեսնելու համար իր հօրը հին բարեկամները, հոն կը հանդիպի Պօղոս Ա. Ե. Թաքթաքեանի. (ապա Պատրիարք Պօլսոյ)։

Իր գրած գրութիւններէն մէկուն մէջ Բերիոյ ընչախոտ լեցնելով նուէր կուտայ Սրբազանին, որ կարդալով գրուածքը, շատ ընտիր կը գտնէ, ուստի Մուրատ վարժապետը կանչել տալով կը հարցնէ անոր թէ որո՞ւն գրուածքն է, Մուրատ իրը ըլլալը կը յայտնէ։ Պօղոս Եպիսկոպոս տեղեկանալով անոր հմտութեան կ'առաջարկէ անոր Արմաշու ժառանգաւորաց վարժարանին ուսուցչութիւնը։ Մուրատ 1830ին վերստին կը կարգուի վարժարանին որ նոր բացուած էր և ուր շրջակայ գիւղերէն 40 աշակերտ ժողուած էին։ Օր մը աշակերտներուն հետ պտոյտի ելած ատեն վազուն ջուր մը կը տեսնէ որ հեղեղատէն ի վար կը հոսէր, վանքին ջուրէն լաւագոյն գտնելով աշակերտներուն հետ միասին գիւղական աղբիւր մը կը շինեն և անունը Քառասուն Մանուկ աղբիւր կը դնեն, քառասուն աշակերտներու ի յիշատակ։

Տարի մը պաշտօնավարելէ ետք կ'ուզէ մեկնիլ Բերիոյ իր խօսեցեալին հետ ամուսնանալու համար, սակայն միաբանութիւնը և Պօղոս Եպիսկոպոս տեսնելով անոր յաջող պաշտօնավարութիւնը, չեն ուզեր որ մեկնի, քանի որ դժուար էր անոր յաջորդ մը գտնել։

Կ'աղերսեն և կը համոզեն որ թողու իր նշանածը և մնայ վանքը. Մուրատ վանքին սիրոյն զոհելով իր խօսեցեալը Պօղոս Ստեփաննոս Պատրիարքին կողմէ թուղթ կը գրուի Բերիոյ եկեղեցականներուն լուծելու համար նշանախօսութիւնը։

Ապա Նիկոմիդիոյ մէջ կ'ամուսնանայ Բիւրքճի Յարութիւնի Սրբուհի աղջկան հետ, կնքահայրութեամբ Մելքոն Զարդաճիի(1). ամուսնանալէն ետք կը սկսի շարունակել պաշտօնը, վարժեցնելով աշակերտները և սորվեցնելով անոնց ընթերցանութիւն, քերականութիւն, տրամաբանութիւն, թուաբանութիւն, գեղագրութիւն, իտալերէն և ձայնական երաժշտութիւն, իսկ հիւանդ աշակերտները կը դարմանէր անական դեղերով։

Իր յառաջադէմ աշակերտներէն կը յիշուին Գէորգ և Միքայէլ վարդապետները, առաջինը Պատրիարք և ապա Կաթողիկոս(2), Տ. Յովհաննէս Մովեան և Ստեփան քահանայ Արմաշցի, Առաքել Ատապազարցի, Տ. Սահակ և Տէր Մեսրոպ քահանայ, Տ. Յովհաննէս Ա. Ք. Պարտիզակցի, Յակոբ Պէյլէրեան (վարժապետ Կէյվէյի Միջագիւղի), Յարութիւն Արապեան Տէօնկէլցի, Տ. Կարապետ քահանայ Իսկիւտարի, Տ. Պօղոս Կիւլէյի, Տ. Գալուստ Տաղքէօյի, Ճանիկ Արամ տպագրիչ, Յակոբ Մսըրֆեան Իզմիտցի և ուրիշներ։ Իսկ Թովմաս Վ. Կուտենացի որ Բէօթահիայի առաջնորդութեան ատեն վախճանեցաւ. աշակերտած էր Մուրատի Արթայի մէջ։

(1) Գերեզմանը Նիկոմիդիոյ եկեղեցիին բակն է եւ տապանագիրը գրած է Մուրատ վարժապետ։

(2) Սարկաւագ տիրացու Յովհաննէս Թշտունի։

Վարժարանին ունեցած վիճակը բարեկարգ էր, Վարդան փաշա 1862 Ապրիլ 16ի Մեճմուայի Հավադիսի 442րդ թիւին մէջ ի վեր հանած է հետևեալ տողերով.

«Թէև գաւառային վարժարաններու մասին ծանօթութիւններ չունինք, այլ 1834ին, Արմաշ եղած ատենինիս տեսանք Մուրատ վարժապետ անունով ուսուցչի մը վարած գիշերօթիկ վարժարանը որ շատ բարեկարգ էր և իրաւամբ մեր զարմացման առիթ եղաւ Եւրոպայէ վերադարձնուս։»

Մուրատ վարժապետ միւս կողմէ եկեղեցիներու համար պատկերներ կը նկարէր, որուն համար ամէն կողմէ խնդրանքներ, և հիւանդները երբ իրեն կը դիմէին ձրիաբար կը դարմանէր։

13 տարի Արմաշի մէջ վարելէ ետք այդ վերստեսուչ ուսուցչի պաշտօնը, 1842 ի վերջերը կը մեկնի ընտանիքով և կ'երթայ կը բնակի Ատաբազար։ Իսկ երբ կը հարցնեն իրեն թէ ինչ է պատճառը որ վանքէն մեկնած է, կը պատասխանէր թէ կը փափաքի իր զաւակները հրահանգել աշխարհական կեանքի, արուեստի և առևտուրի մէջ և ոչ թէ վանական կեանքի մէջ։

Հոն կը սկսի իր մեծ հօր արհեստը աշխատիլ, տպելով կտաւներու վրայ, որոնց կաղապարները ինք կը փորագրէր՝ փայտի վրայ և ներկը ինք կը յօրինէր։ Այն ատենները շինեց քնար մը (սանթուր) որով կը նուագէր իր հանգստեան ժամերուն։ Ինք քաջ արուեստագէտ և բնագէտ, աչքի ցաւը, բորոտութիւնը և ուրիշ հիւանդութիւններ կը բժշկէր։ Այս միջոցներով իր ապրուստը կը հայթայթէր և երեկոյներն ալ Իտալերէնէ կը թարգմանէր Սօաւի տարերք իմաստասիրութեան։

1844 ին կը փոխադրուի Նիկոմիդիա և հոն քանի մը ամիսներ տեղւոյն վարժարանին ուսուցչութիւնը վարելով կը փափաքի Երուսաղէմ ուխտի երթալ՝ ընտանիքով, ուստի կը մտնէ առագաստանաւ (շոգենաւ չկար այն ժամանակ) և 17 օր նաւարկութենէ ետք Յոպպէ կը հասնի և անկէց Երուսաղէմ, ուր ուրիշ ուխտաւորներու հետ կ'իջևանի Ս. Յակոբեանց վանքը։ Հոն ուսումնասէր Զաքարիա պատրիարք իր փոքրաւորին՝ Յակոբոս սարկաւագ Զիլինկիրեանի ներկայութեան կ'ըսէ. «կ'ուզեմ որ հաւանիս մեր մօտ մնալ և քիչ մը հրահանգել սա մեր էշերը»։ Մուրատ տեսնելով փոքրաւորին շուարումը կը պատասխանէ. «Ներեցէք Սրբազան ես անբաններու կրթիչ չեմ այլ բանականներու» և բանակցութիւններէ ետք կը հաւանի նախ վանքին մէջ և կ'ըստանձնէ ուսուցչութեան պաշտօնը ուր սարկաւագները և դպիրները թուով իբր երեսուն երկու կը սորվէին իրմէ հայերէն, տրամաբանութիւն ևն.։

1844ին ձմեռը վանքին մէջ անցնելէն ետք Զաքարիա Պատրիարք կ'որոշէ մեծ տուն մը (վանքին պարիսպէն դուրս) իբր վարժարան և բնակարան, հոն կը շարունակէ իր աշակերտներուն ուսուցանել մինչև իր մեկնումը։ Ուսանողներն էին 4 սարկաւագներ, Յակոբոս Զիլինկիրեան (յետոյ վարդապետ), Կարապետ Մարգունցի (յետոյ փոխանորդ Պօլսոյ և լուսարարապետ և Եպիսկոպոս), Յարութիւն Մարաշցի (յետոյ վարդապետ), Ստեփան Ադրիանուպոլսեցի (յետոյ վարդապետ)։ Դպիրները՝ Սիմոն Սասունցի (յետոյ բոլորական քարոզիչ), Յովհաննէս Մալկարացի, Ալիքսան Պոլսեցի (յետոյ Մայր-Եկեղեցւոյ վարդապետ) ևն.։

Զաքարիա պատրիարք ուսանողներուն յառաջդիմութիւնը տեսնելով Մուրատ վարժապետը կը վարձատրէր առատապէս։

Այդ ժամանակները Պոլսոյ մէջ բողոքականութեան խնդիրները կը յուզուէին, և Հայոց Մատթէոս Պատրիարք (յետոյ Կաթողիկոս) կ'ուզէր առաջքը առնել բողոքականութեան և ահա Մուրատի նախանձորդները վրէժխնդրութեան առիթ գտնելով Տ. Մատթէոսի կ'ամբաստանեն Մուրատը թէ բողոքականներու հետ յարաբերութեան մէջ է և թէ բողոքական է։

Մատթէոս Պատրիարք առանց քննութեան կը գրէ Զաքարիա Պատրիարքին թէ Մուրատէն զգոյշ ըլլայ։ Զաքարիա կարդալով այդ նամակը կը զարմանայ և չը հաւատար նամակին, մանաւանդ տեսնելով Մուրատի ջերմեռանդութիւնը։ Չէր կրնար հաւատալ ամբաստանութեան և միւս կողմէ ալ չէր կրնար Մատթէոս Պատրիարքի հրամանին դէմ գալ, ուստի կանչելով Մուրատը ցոյց կուտայ նամակը։ Այն ատեն Մուրատ կը պատասխանէ թէ կ'ուզէ Պոլիս երթալ և իր հակառակորդներուն պատասխանել։ 1846ին Զատկէն ետք ուխտաւորներու հետ կը մեկնի Երուսաղէմէն և յիսուն օրուան ճամբորդութենէ մը ետք կը հասնի Նիկոմիդիա, ուր կը հաստատէ իր բնակութիւնը։

Իր գրպարտիչները ամօթահար կ'ըլլան և Մատթէոս Պատրիարք զգալով իր սխալը, քըն-

նութենէ վերջ Մուրատի անպարտութիւնը կը վճռէ և պատիւով կ'արձակէ զանիկա։

Ցետոյ փերեզակի մը խանութ կը բանայ ուր իր որդւոյն հետ առևտուրով կը զբաղի, բայց Տատեան Յովհաննէս ամիրայ որ Նիկոմիդիայ կ'այցելէր իբր վերատեսուչ Նիկոմիդիոյ ասուեղինաց և Հէրէքէի մետաքսի գործարաններուն, կը համոզէ Մուրատ վարժապետը որպէս զի տեղւոյն Լուսաւորչեան վարժարանին ուսուցիչ և Գաւառին բոլոր վարժարաններուն տեսչութիւնը ստանձնէ, որուն թոշակը ամիրան ինք իր գրպանէն կուտար։

Նոյն ժամանակները Մուրատ վարժապետ Պոլիս կը հրաւիրուի Արքունի ճարտարապետ Կարապետ ամիրայ Պալեանի կողմէ, դպրոցական կարեւոր խնդիրներու մասին խորհրդակցելու համար, հետեւեալ հետաքրքրական նամակով.

Անգուգական սիրելի,

Ազնուամեծար Կարապետ Ամիրա ճարտարապետ Արքունի՝ հարկ եդ յիս վերայ գրել զթուղթս առ ձեզ, և ծանուցանել յանուն իւր՝ զի ի գալուստ առաջակայ վաճարին, և դուք լինիջիք մին յայս կոյս նաւելոց, իբր զի ասէ, ոչ միայն ես անձկացեալ եմ տեսանել զնա, այլ և մօսիւ Յակոբ Կոճիկեան ի պէտս ինչ կարեւոր խօսից կարօտի հարկաւ տեսանել զնա, գիտացեալ ապա զայսոսիկ ըստ ակնկալեալ ժամանակին փոյթ կալջիք գտանել յայսր, և ես իսկ ի շնորհս նոցա՝ որք զձեզ կոչեն և յայս նուագ փայլեցից ի տեսութեան ձեր և ի սէր։

Անհամեմատ սիրելոյն իմոյ պատուելի Յովհաննէս Աղայի ողջոյն տամ կարօտիւ։ Յաւել ես լերուք ողջ ի տէր։

Աղօթարար Նուաստ աբեղայս
ՅՈՎՀԱՆՆԷՍ

ի 5 Օգոստոս 1847, ի Պէշիկթաշ

Մուրատ իր Աբրահամ զաւկին հետ Պոլիս կ'երթայ. Վերադարձին 1848 գարնան կը սկսի տուն մը շինել տալ Նիկոմիդիոյ մէջ, մինչդեռ տունը չէր աւարտած տակաւին քօլերան կը սկսի ճարակիլ հոն, Մուրատ վարակուողներուն օգնութեան կը հասնի և ահա ինքն ալ կը վարակուի, Գարէլլի անուն իտալացի հմուտ բժշկէ մը կը դարմանուի և 8 օրէն բաւական կ'աղէկնայ, բայց ահա Պոլսէն կը հասնին երեք անփորձ բժիշկներ որոնք բարեկամի մը միջոցաւ Մուրատը դարմանելու կը սկսին, դարմանման միջոցն է եղեր այն ատեն, տաք ալիւներ դնել մարմնոյն ամէն կողմը, մինչ Մուրատ տաքութեան սաստկութենէն չէր թողուր և անկողնէն կ'ելլէր, բռնի նորէն անկողինը կը պառկեցնէին, և չորս հաւկու մարդիկ ամրապէս կը բռնէին խեղճ հիւանդը որ ողորմագին կը խնդրէր զինքը հանգիստ թողուլ, սակայն ոչ ոք իրեն մտիկ կ'ընէր, այլ անփորձ բժիշկին հրամանին կ'անսային որ հետզհետէ կ'աւելցնէր տաք ալիւներն ալ և Մուրատի սիրելիները կարծելով թէ աղէկ բան մը կ'ընեն, բժիշկին հրամանները կը գործադրէին մինչեւ որ դժբաղդ Մուրատ վարժապետ չնչասպառ եղած աւանդեց իր հոգին տանջանքներով 1848 յունիս 7ին և թաղուեցաւ Իզմիտի եկեղեցականներուն քով, որուն շիրիմին վրայ հետեւեալ արձանագրութիւնը կայ.

ՇԻՐԻՄ

Յարութիւն Մուրատ վարժապետի Աբրահամեան Տիրացուին Բերիացւոյ, ծնեալ 1801 'ի գաւառն Յովհաննու Կաթողիկոսին իմաստասիրի Օձնեցւոյ. առաջին տեսուչ ուսուցանողաց դպրեվանուցն Արմաշու 1830. որ յես բազմարդիւն կրթական պաշտօնին օգտակար հանդիսանալոյ Ազգին նաեւ յԱտաբազար, յԵրուսաղէմ, 'ի Նիկոմիդիա եւ այլուր փոխեցաւ առ Յիսուս Յոյս իւր. յամին 1848
'ի 25 Յունիսի.
Շիրմակից ունի
զեօրեանն որդեակն Խոսրով
1850

Մուրատ Ձիւն-Ծաղիկ անուն թերթ մը հրատարակել ուզած է. և որուն առաջին թիւը պատրաստած՝ սակայն չէ տպուած։ Ինք հմուտ էր գրելէ ամէն բանի, հայերէն լեզուի, բժշկութեան, արուեստի և երաժշտութեան։

Իր ժամանակի գիտնական մտքերէն մին էր և շատ ալ համեստ, աւելի աննշմար ապրիլ ուզած է քան երեւիլ։

ԱՂԲԻՒՐՆԵՐ.— Վարք Յ. Մուրատայ վարժապետի եւ որդւոյ նորին 1900 Այսբէժանօզ գրեալ Յ. Մուրատեանէ: Մուսայք Մասեաց Ա. Հայկունի եւլն.:

«ՅՈՒՇԱՏԱԿԱՐԱՆ» պիտի հրատարակուի պրակ առ պրակ ամիսը անգամ մ[illegible] թիւնը պիտի բաղկանայ 48 պրակներէ՝ 4 հատորի մէջ ամփոփուած և պիտի պար[illegible] ազգայիններու լուսանկարները, կենսագրութիւնները և ձեռագիր անտիպ գրուա[illegible] դիւաններու և պատրիարքներու կոնդակները նաև:

Կը շարունակուի Բ. Գ. Դ. հատորներու բաժանորդագրութիւնը 80 ղրուշի[illegible]

Կոչում կ'ընենք հասարակութեան և բանասէրներու մեզ ուղարկել իրենց [illegible] տօքիւմանները, ըլլան լուսանկար թէ ձեռագիր և կամ կենսագրութիւններ որոնք [illegible] իրենց կը վերադարձնենք դարձեալ:

Ամբողջ գործին բաժանորդագրութիւնն է կանխիկ մէկ օսմանեան ոսկի ամէն տեղի համար, իւրաքանչիւր հատորի համար 30 ղրուշ:

Բաժանորդներու անունները պիտի հրատարակենք հետզհետէ:

Գործը պիտի աւարտի մինչև 1912 տարւոյ սկիզբները և բաժանորդները պիտի ստանան իբր նուէր գեղարուեստական չքեղ կողքեր որոնք արուեստասէրներու յանձնած ենք պատրաստելու համար և որոնք խորհրդանշանը պիտի ըլլան Հայ. Տպագրութեան 400 ամեայ Յոբելեանին:

Վստահ ենք թէ Հասարակութիւնը պիտի գնահատէ այս գործը որ բազմածախս եղած է և որուն համար տարիներով տքնած տառապած ենք:

Հրատարակուած է արդէն առաջին հատորը որ կը վաճառուի 30 ղրուշի Պոլիս Զարդարեան գրատուն, Բերա Վայսի գրավաճառատունը, Աղեքսանդրիա Յ. Ղազիկեանի և Օ. Գարաճեանի և Գահիրէ Սուրէն Չաքմաքճեանի քով:

Մէկ պրակի գինը 2 ղրուշ, գաւառներու համար 100 փարա:

Դիմել Զարդարեան Գրատուն, Պոլիս, Չախմախճըլար, 24—26:

Կը ծախուի ամեն տեղ:

ՄԵՐ ՎՃԱՐՈՂ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԸ

Հետզհետէ կը հրատարակենք անունները մեր բաժանորդներուն որոնք կը վճարեն իրենց բաժնեգինը, սակայն կ'ընենք ամէն անոնց համար որոնք կ'ուզեն վստահ ըլլալ. անոնք որ կը վճարեն և անունին հոս չեն տեսներ, անմիջապէս պէտք է մեզ իմաց տան:

				3019
37. — Ամեն. Տ. Եղիշէ Ա. Պատրիարք Դուրեան		4	հատոր	108
38. — Գեր. Հմայեակ եպիսկ. Դիմաքսեան Տեարք		Ա..	»	30
39. — Ժամկոչեան		Ա.. Բ.	»	54
40. — Սարգիս Աշճեան		Ա.. Բ.	»	54
41. — Յակոբ Կիւրպէնկեան		Ա..	»	30
42. — Առաքել Եազըճեան		Ա..	»	30
43. — Նշան Ջերէջեան	(Մերսին)	4	»	108
44. — Յակոբ Յակոբօֆ		4	»	108
45. — Սմբատ Բէապիւլեան		4	»	108
46. — Պերճ Օհանեան	(Աղեքսանդրիա)	4	»	108
47. — Արթին Մուղալեան	»	4	»	108
48. — Եզնիկ Մէնէշեան		Ա..	»	30
49. — Միսակ Բանդուքճեան		Բ. Գ. Դ.	»	80
50. — Վահրամ Սամուէլեան		Ա..	»	30
51. — Պ. եւ Տ. Յակոբեան Եղբարք		4	»	108
52. — Վահրամ Մարտիրոսեան		Բ.	»	30
				4143

«Ազգային գրադարան»
NL0251059